

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

**«Հետքուհական կրթության վերակառուցումը
Բոլոնիայի գործընթացի համատեքստում»**

**ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

Յու.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա.Ս. ԲՈՒԴԱՂՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2007

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Բաց Հասարակության Ինստիտուտի Աջակցության Հիմնադրամի Հայաստանյան Մասնաճյուղի ֆինանսական հովանավորությամբ՝ Բարձրագույն կրթության աջակցման ծրագրի շրջանակներում:

Հեղինակներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Հիմնադրամին՝ նախագծի ֆինանսավորման և իրականացման բոլոր փուլերում ցուցաբերած աջակցության համար:

Բովանդակություն

I. Նախաբան	5
II. << հետքուհական կրթության հիմնախնդիրները և վերակառուցման հիմնական նպատակները	7
III. << հետքուհական կրթության բարեփոխումների ռազմավարության հիմնական դրույթներ	10
Նպատակ 1. Համապատասխանեցնել << հետքուհական կրթությունը Բոլոնիայի գործընթացի երրորդ աստիճանի պահանջներին	10
Ածանցյալ խնդիրներ և ռազմավարության երաշխավորվող ուղղություններ	10
Խնդիր 1.1. Համապատասխանեցնել << հետքուհական կրթության որակավորումների առկա կառուցվածքը (հետազոտողի որակավորման աստիճան, թեկնածույի գիտական աստիճան) բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական համընդհանուր հենքի երրորդ աստիճանին:	10
Երաշխավորություններ ռազմավարության վերաբերյալ	10
Խնդիր 1.2. Ստեղծել միասնական չափանիշներ << բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի երրորդ աստիճանի կառուցվածքի և կազմակերպման վերաբերյալ:	11
Երաշխավորություններ ռազմավարության վերաբերյալ	11
Խնդիր 1.3. Ապահովել երրորդ աստիճանի (ասպիրանտուրայի) գիտակրթական ծրագրերի որակը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան:	12
Խնդիր 1.4. Խթանել երրորդ աստիճանի ծրագրերի միջազգայնացումը (Եվրոպայնացումը):	13
Նպատակ 2. Ապահովել ասպիրանտուրայի ընդունելության կայուն և պլանաչափ աճը << Հայաստանի բարձրագույն կրթության, գիտության և իննովացիոն տնտեսության զարգացման կարիքներին համահունչ	14
Ածանցյալ խնդիրներ և ռազմավարության երաշխավորվող ուղղություններ	14
Խնդիր 2.1. Բարելավել բուհերի ընդունելության պետական պլանավորումը, ապահովելով վերին 2 աստիճանների առաջանցիկ զարգացումը:	14
Խնդիր 2.2. Ապահովել ասպիրանտուրայի մուտքի մատչելիությունը, ուսուցման կազմակերպման և ֆինանսավորման բազմածևությունը:	14
Նպատակ 3. Մեծացնել ասպիրանտուրայի դերը բարձրագույն կրթության և գիտության ու իննովացիաների համակարգերի փոխկապակցության և	

համագործակցության զարգացման մեջ, բարձրացնել շրջանավարտների ծառայունակությունն ու մրցունակությունը հետազոտական աշխատաշուկայում- 16

Աժանացյալ խնդիրներ և ռազմավարության երաշխավորվող ուղղություններ ----- 16

Խնդիր 3.1. Զարգացնել բուհերի (գիտական կազմակերպությունների) համագործակ-ցությունը արտադրական և գործարար ոլորտների ձեռնարկությունների հետ՝ ասպիրանտների ուսուցման և հետազոտությունների համատեղ ալանավորման և իրականացման ուղղությամբ: ----- 16

Խնդիր 3.2. Ասպիրանտների համար ստեղծել հետազոտությունների նպաստավոր պայմաններ և հետազոտական կարիերայի հնարավորություններ բուհի ներսում և դրսում:----- 16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----- 18

Հավելված----- 20

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒցՈՒՄՆԵՐ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ Մշակման ՎԵՐԱԲԵՐՅԱԼ-- 20

1. Ծրագրի նպատակը----- 20

2. Հետազոտողի ծրագրի կրթական բաղկացուցիչը----- 21

3. Ծրագրի ընդիանուր կառուցվածքը ----- 22

4. Հետազոտողի ծրագրի ալանավորման ընդիանրացված սխեմա ----- 22

I. Նախաբան

Առաջարկվող փաստաթուղթը մշակվել է “Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ”ի կողմից՝ «ՀՀ բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության առկա վիճակը և զարգացման հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում» նախագծի շրջանակներում: Նախագիծն իրականացվում է Բաց հասարակության ինստիտուտի Ազակցության հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի (ԲՀԻԱՀ ՀՄ) ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթղթի նպատակն է ներկայացնել հիմնական հայեցակարգային դրույթներ ՀՀ հետքուհական կրթության բարեփոխումների ռազմավարության վերաբերյալ: Փաստաթղթի անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ նկատառումներով: Եվրոպական կրթության նախարարների Բեռլինյան կոմյունիկեյով¹ Բոլոնիայի գործընթացի գործողություններին ավելացվել է 10-րդ և վերջին ուղղությունը՝ “Դոկտորական աստիճանը և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի համահյուսումը (սիներգիան)”: Դոկտորական ծրագրությունը, իսկ մեր տերմիններով հետքուհական կրթությունը պաշտոնապես ընդգրկվել է Բոլոնիայի գործընթացում՝ որպես բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի երրորդ աստիճան: Երրորդ աստիճանում Եվրոպական ռեֆորմի հետագա ընթացքի տեսակետից էական ուղղորդիչ դեր է հատկացվում ԵԲԿՏ-ում դոկտորական ծրագրերի կառուցման ընդհանուր սկզբունքներին², որոնք պետք է ձևակերպվեն Զալցբուրգի արդեն ընդունված 10 սպառումքներին³ հիման վրա: Որպես 2005-ից Բոլոնիայի անդամ Երկիր՝ Հայաստանը պարտավոր է վերակառուցել և համապատասխանեցնել իր հետքուհական կրթության համակարգը Բեռլինի, Բերգենի և Լոնդոնի Կոմյունիկեներում ներկայացված պահանջներին:

¹ “Realising the European Higher Education Area”. Communiqué of the Conference of Ministers responsible for Higher Education in Berlin on 19 September 2003. 9p.

² The European Higher Education Area - Achieving the Goals. Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Bergen, 19-20 May, 2005. 6p.

³ Bologna Seminar on “Doctoral Programmes for the European Knowledge Society” (Salzburg, 3-5 February 2005). Conclusions and Recommendations. 3p.

1) Ասպիրանտուրայի վերակառուցումը, մասնավորապես, դեպի հետազոտական աշխատաշուկայում պահանջարկված փոխանցելի ձիրքերի և կարողությունների ձևավորումն ուղղված ստրուկտուրացված կրթական ծրագրի ներմուծումը թելադրվում է նաև շրջանավարտների ծառայունակության բարձրացման և ձևավորվող գիտահենք տնտեսության հետազոտական աշխատուժի որակյալ համալրման անհրաժեշտությամբ:

Փաստաթղթի համար հիմք է ծառայել հետքուհական կրթության (դոկտորական ծրագրերի) ասպարեզում ԵԲԿՏ-ում և Հայաստանում իրավիճակի համադրական վերլուծությունը, բարեփոխումների հիմնախնդիրների և կարիքների բացահայտումն ու դասակարգումը, որոնք ներկայացված են Վերոհիշյալ նախագծի հիմնական բաղադրիչը հանդիսացող վերլուծական հաշվետվության⁴ համապատասխան բաժնում: Մասնավորապես, այստեղ ուսումնասիրվել են Բեռլինից Լոնդոն ընկած ժամանակահատվածում դոկտորական ծրագրերի ուղղությամբ Բոլոնիայի գործընթացի ընթացքը կարգավորող բոլոր հիմնական փաստաթղթերը:

Ինչպես կարելի է ենթադրել անվանումից, ներկայացվող փաստաթղթը չի հավակնում ռազմավարության սպառիչ շարադրության: Այն ընդամենը հայեցակարգային հենք կարող է ծառայել հետքուհական կրթության բարեփոխումների ռազմավարության համար, ուրվագծելով վերջինիս շրջանակները: Առաջադրվում են որոշակի ստրատեգիական նպատակներ, դրանցից բխող խնդիրներ, ինչպես նաև երաշխավորություններ և հարցադրումներ յուրաքանչյուր խնդրի իրագործման ռազմավարության ուղղությամբ, ընդորում որոշ հարցադրումներ ենթադրում են նաև այլընտրանքային պատասխաններ և լուծումներ:

⁴ Բոլոնիայի գործընթացով դեպի Եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: Երևան, 2007

II. << հետքուհական կրթության հիմնախնդիրները և վերակառուցման հիմնական նպատակները

Իրավիճակի համադրական վերլուծությունը բացահայտում է Բոլոնիայի գործընթացին խոչընդոտող հետևյալ հիմնախնդիրները:

- ❖ Չի սահմանվել համապատասխանություն բարձրագույն կրթության երրորդ աստիճանում Հայաստանում շնորհվող հետազոտողի որակավորման, թեկնածույի գիտական աստիճանի և երրորդ աստիճանի եվրոպական դոկտորի որակավորման միջև: Չկա որոշակիություն նաև Հայաստանում գիտական երկրորդ աստիճանի (դոկտորի աստիճանի) պահպանման վերաբերյալ: Դեռևս չի մշակվել և օրենսդրորեն ամրագրվել << բարձրագույն կրթության որակավորումների ազգային հենքը:
- ❖ Չկան հետքուհական կրթության պետական կրթական չափորոշիչներ, դեռ չեն սահմանվել պետական լիցենզավորման և հավատարմագրման պահանջները (կարգերը): Բացակայում են որակի ներքին և արտաքին գնահատման գործուն մեխանիզմներ, որոնք հավաստի պատկերացում կտային հետքուհական ծրագրի որակի վերաբերյալ՝ ինչպես հետազոտական, այնպես էլ կրթական կառուցամասերի գծով:
- ❖ Ասպիրանտուրայի կրթական բաղկացուցիչը սահմանափակվում է թեկնածուական մինիմումի 3 համընդհանուր առարկաներով և չի ձևակերպված որպես ստրուկտուրացված կրթական ծրագիր (բացառությամբ ՀՊՃՀ-ի): Բացակայում են որակավորման բնութագրիչները, որոնք պետք է սահմանեն ձիրքերի և կարողությունների կազմը և մակարդակը ծրագրի ելքում:
- ❖ Ասպիրանտուրայի ընդունելության խիստ սահմանափակ չափաքանակների պայմաններում (նախորդ աստիճանի շրջանավարտների 5%-ից էլ պակաս) անթույլատրելի ցածր են ասպիրանտուրայի մատչելիությունն ու ընդգրկելիությունը: Չեն հստակեցվել ընդունելության պլանավորման սկզբունքները, չեն սահմանվել համամասնություններ հետազոտական կրթության 2 աստիճանների՝ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության պլանների միջև:
- ❖ Չեն համաձայնեցվել մագիստրատուրայի և ասպիրանտուրայի մասնագիտությունների ցանկերը: Ասպիրանտուրայի ընդունելության առկա կարգը հաշվի չի առնում մագիստրատուրայի նախորդող աստիճանում դիմորդների ուսումնառության արդյունքները (գնահատականները):

- ❖ Ընդհանուր առմամբ ցածր է նաև ասպիրանտուրայի շրջանավարտների ծառայունակությունը՝ հատկապես գիտամանկավարժական գործունեության ասպարեզից դուրս: Եռամյա ուսուցումը ասպիրանտուրայում արդյունավետ չի օգտագործվում ապագա հետազոտական կարիերային նախապատրաստման և կարիերայի այլընտրանքային հնարավորությունների ձևավորման համար:
- ❖ Թույլ է ատենախոսական հետազոտությունների կապը արտադրության, բիզնեսի և ընդհանրապես պոտենցիալ գործատուների հետ, խիստ իջեցված են դրանց կիրառական նշանակությունը և դերակատարությունը ձևավորվող իննովացիոն համակարգում: Հայաստանում դեռ չի ներմուծված Եվրոպական պրոֆեսիոնալ և արտադրական “դոկտորատների” արդյունավետ փորձը, որոնք կոչված են շաղկապել դոկտորական (ասպիրանտական) ծրագիրը ապագա մասնագիտությանը և գործատույի պահանջմունքներին ու կարիքներին:
- ❖ Օրենսդրական, ֆինանսական և այլ խոչընդոտող գործոնների շնորհիվ խիստ սահմանափակված է և պլանաչափ բնույթ չունի Հայաստանի ասպիրանտների ակադեմիական շարժունությունը միջմասնագիտական, միջազգային և հատկապես միջազգային և Եվրոպական մակարդակներով, որն այսօր առաջնային դեր ունի առաջավոր հետազոտական փորձի և լրացուցիչ աշխատանքային ձիրքերի ձևավորման տեսանկյունից:
- ❖ Ծայրահեղ անբավարար է հետքուհական կրթության պետական ֆինանսավորումը, ինչը թույլ չի տալիս ստեղծել գրավիչ հետազոտական միջավայր, անհրաժեշտ ինֆրակառուցվածք, ինչպես նաև կայուն նախադրյալներ ծրագրի հետագա զարգացման և բարեփոխումների համար: Համակարգային մակարդակով ասպիրանտուրան դեռևս չունի նաև ոչ պետական ֆինանսավորման հուսալի այլընտրանքային աղբյուրներ, որոնք այս կամ այն չափով կփոխհատուցելին պետական ֆինանսավորման սուր պակասը:
- ❖ Էական խոչընդոտող գործոն է նաև բուհական համակարգի ցածր իրազեկությունը բարձրագույն կրթության երրորդ աստիճանում Բոլոնիայի ռեֆորմի վերջին զարգացումների և պահանջների վերաբերյալ:

Դիտարկվող ասպարեզում Եվրոպական ռեֆորմի վերջին զարգացումների վերլուծության և թվարկված հիմնախնդիրների ու կարիքների ուսումնասիրության հիման վրա նախանշվում են ՀՀ հետքուհական կրթության վերակառուցման հետևյալ 3 հիմնական նպատակները:

1. Համապատասխանեցնել ՀՀ հետքուհական կրթությունը Բոլոնիայի գործընթացի երրորդ աստիճանի պահանջներին:
2. Ապահովել ասպիրանտուրայի ընդունելության կայուն և պլանաչափ աճը Հայաստանի բարձրագույն կրթության, գիտության և իննովացիոն տնտեսության զարգացման կադրային կարիքներին համահունչ:
3. Մեծացնել ասպիրանտուրայի դերը բարձրագույն կրթության և գիտության ու իննովացիաների համակարգերի փոխկապակցության և համագործակցության զարգացման մեջ, բարձրացնել շրջանավարտների ծառայունակությունն ու մրցունակությունը հետազոտական աշխատաշուկայում:

Ստորև ըստ ձևակերպված նպատակների ներկայացվում են դրանց իրականացման խնդիրները և երաշխավորություններ բարեփոխումների ռազմավարության համապատասխան ուղղությունների վերաբերյալ:

III. «ՀՀ հետքուհական կրթության բարեփոխումների ռազմավարության հիմնական դրույթներ»

Նպատակ 1. Համապատասխանեցնել «ՀՀ հետքուհական կրթությունը Բոլոնիայի գործընթացի երրորդ աստիճանի պահանջներին»

Աժանցյալ խնդիրներ և ռազմավարության երաշխավորվող ուղղություններ

Խնդիր 1.1. Համապատասխանեցնել «ՀՀ հետքուհական կրթության որակավորումների առկա կառուցվածքը (հետազոտողի որակավորման աստիճան, թեկնածուի գիտական աստիճան) բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական համընդհանուր հենքի երրորդ աստիճանին»:

Երաշխավորություններ ռազմավարության վերաբերյալ

ա) Որոշել բարձրագույն կրթության երրորդ աստիճանի որակավորումների կառուցվածքը՝ որակավորումների «ՀՀ ազգային հենքի շրջանակներում»:

Տարբերակ 1. Պահպանվում է օրենսդրութեն ամրագրված առկա երկմակարդակ որակավորումների կառուցվածքը՝ հետազոտողի որակավորման աստիճան և թեկնածուի գիտական աստիճան: Հարկ է նշել, որ որակավորումների եվրոպական հենքը հնարավորություն է ընծեռում նաև միջանկյալ աստիճանի պահպանման համար՝ որակավորումների ազգային հենքի շրջանակներում:

Տարբերակ 2. Հետազոտողի որակավորման աստիճանը փոխարինվում է հետազոտողի հավաստագրով, որն ասպիրանտներին շնորհվում է հետազոտողի եռամյա (երկամյա) կրթական ծրագրի ատեստավորման արդյունքներով: Գիտությունների թեկնածուի (դոկտորի) աստիճանը պահպանվում է՝ որպես որակավորման միակ աստիճան բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (ասպիրանտուրայի) համար:

բ) Օրենսդրութեն սահմանել «ՀՀ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համարժեքությունը եվրոպական դոկտորի աստիճանին»:

Տարբերակ 1. «ՀՀ գիտությունների դոկտորի աստիճանը պահպանվում է գիտական կադրերի որակավորման բարձրագույն մակարդակի կամ պատվավոր գիտական տիտղոսի կարգավիճակով:

Տարբերակ 2. «ՀՀ գիտական աստիճանների երկմակարդակ կառուցվածքը փոխարինվում է գիտությունների դոկտորի միասնական աստիճանով:»

Տարբերակի ընտրությունից⁵ կախված է նաև բարձրագույն կրթության երրորդ աստիճանում շնորհվող գիտական աստիճանի անվանումը:

- գ) ա) և բ) կետերին համապատասխան կատարել փոփոխություններ ՀՀ բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին և ՀՀ գիտական ու գիտատեխնիկական գործունեության մասին օրենքներում:

Խնդիր 1.2. Ստեղծել միասնական չափանիշներ ՀՀ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի երրորդ աստիճանի կառուցվածքի և կազմակերպման վերաբերյալ:

Երաշխավորություններ ռազմավարության վերաբերյալ

- ա) Օրենսդրության ամրագրել երրորդ աստիճանում (ասպիրանտուրայում) հետազոտողի ստրուկտուրացված կրթական ծրագրի ուսուցման և ատեստավորման պարտադիրությունը՝ որպես թեկնածույի (դոկտորի) գիտական աստիճանի անհրաժեշտ պայման:
- բ) Սահմանել երրորդ աստիճանի ընդհանուր տևողությունը ուսումնական տարիներով և ընդհանուր ուսումնական բեռնվածքը ECTS կրեդիտային միավորներով, ինչպես նաև հարաբերակցությունը հետազոտական և կրթական կառուցամասերի միջև կրեդիտների ընդհանուր թվում:

Ելելով ա) կետի պահանջից և Բեռլինի Կոմյունիկեյի Երաշխավորությունից (3-ից 4 տարի), առաջարկվում է առկա ուսուցման ասպիրանտուրայի տևողությունը սահմանել 4 ուսումնական տարի (5 տարի հեռակա ուսուցման համար)՝ 240 ECTS միավոր ընդհանուր բեռնվածքով, ինչը թույլ կտա հետազոտողի կրթական ծրագրի ներմուծման դեպքում ապահովել նաև հետազոտական կառուցամասի անհրաժեշտ որակը: Երաշխավորվող հարաբերակցությունը հետազոտական և կրթական կառուցամասերի կրեդիտային միվորների թվաքանակների միջև՝ 120/120 (150/90):

- գ) ա) և բ) կետերին համապատասխան ստեղծել պետական կրթական չափորոշիչ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի համար:

⁵ Զերնպահ մնալով տարբերակների համեմատական վերլուծությունից, անցումնային շրջանի համար հեղինակներն առաջնություն են տալիս առաջն տարբերակին, հաշվի առնելով գիտական աշխատողների ստեղծագործական աճի խթանման անհրաժեշտությունը:

դ) Զարգացնել հետազոտական կրթության կազմակերպման ներբուիական և միջբուիական, այդ թվում, միջազգային արդյունավետ կառույցներ՝ ընտրելով կառավարման մոդելը բուհերի առանձնահատկություններին և ինստիտուցիոնալ ռազմավարությանը համապատասխան:

Քննարկման են արժանի հետևյալ տարրերակները՝

- **Կառուցվածքը մեկտեղում է մագիստրանտներին և ասպիրանտներին, միավորելով առկա կրթական և նյութական ռեսուրսները և ապահովելով ծրագրերի ակտիվ փոխազդեցությունը;**
- **Կառուցվածքը ներառում է միայն ասպիրանտներին;**
- **Միջբուիական կառուցվածքներ (համատեղ ծրագրեր, «Եվրոպական դոկտորատ»)⁶ առանձին գիտական ուղղությունների համար:**

Խնդիր 1.3. Ապահովել երրորդ աստիճանի (ասպիրանտուրայի) գիտակրթական ծրագրերի որակը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան:

- ա) Ըստ մասնագիտական ուղղությունների (մասնագիտությունների) մշակել մոդուլային կառուցվածքով և կրեդիտային հենքով հետազոտողի կրթական ծրագրեր, ելակետ ունենալով ինչպես պարտադիր հետազոտական ձիրքերի (հետազոտական մեթոդաբանություն և տեխնոլոգիաներ, նախագծերի մշակում և կառավարում, վերլուծության և խնդիրների լուծման կարողություն, գիտական գրագրություն, մտավոր սեփականության իրավունքի և գիտական էթիկայի իմացություն և այլն), այնպես էլ հետազոտական աշխատաշուկայում պահանջարկված փոխանցելի անձնական/մասնագիտական ձիրքերի ու կարողությունների (գրավոր և բանավոր հաղորդակցություն, թիմային և ցանցային աշխատանք, ռեսուրսների և ինֆորմացիայի կառավարում, դեկանական կարողություն և կարիերայի կառավարում և այլն) ձևավորումը և հիմք ընդունելով առանձին մասնագիտությունների որակավորման բնութագրիչները և ծրագրային մոդուլների հստակ ձևակերպված ու չափելի ելքային արդյունքները:
- բ) Ատենախոսական հետազոտությունները համարել բուհի (գիտական կազմակերպության) հետազոտական աշխատանքների ինտեգրալ բաղադրամաս,

⁶ Bologna Seminar on “Doctoral Programmes for the European Knowledge Society” (Salzburg, 3-5 February 2005). Conclusions and Recommendations. 3p.

ապահովելով ատենախոսական թեմատիկայի կապը իրականացվող հետազոտական նախագծերի հետ:

- գ) Զարգացնել և ներդնել հետազոտողի ծրագրի որակի գնահատման մոնիթորինգի և վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ և ինստիտուցիոնալ կառույցներ՝ որակի ապահովման եվրոպական չափանիշներին (ENQA ստանդարտներին) համաձայն:
- դ) Օրենսդրորեն ծևակերպել պետական և ոչ պետական բուհերին (գիտական կազմակերպություններին) ներկայացվող պահանջները երրորդ աստիճանի ծրագրերի կազմակերպման վերաբերյալ (երկրորդ աստիճանի հավատարմագրված ծրագրեր, հետազոտական ռեսուրսներ և այլն): Ստեղծել և կիրարկել ասպիրանտուրայի լիցենզավորման և հավատարմագրման կարգ:

Խնդիր 1.4. Խթանել երրորդ աստիճանի ծրագրերի միջազգայնացումը (Եվրոպայնացումը):

- ա) Ընդլայնել ասպիրանտների շարժունությունը միջբուհական, միջձյուղային (բուհերի և արտադրական, գիտական ու այլ կազմակերպությունների միջև) և միջազգային համագործակցության նպատակային ծրագրերով, աստիճանաբար դարձնելով այն հետազոտողի ծրագրի պարտադիր բաղադրանաս: Վերացնել առկա օրենսդրական, վարչական և սոցիալական արգելքները և ստեղծել նպաստավոր պայմաններ ասպիրանտների շարժունության համար:
- բ) Ուսումնասիրել, յուրացնել և ներմուծել դոկտորական աստիճանի թեկնածուների շարժունության Եվրոպական արդյունավետ փորձը և կազմակերպական մեխանիզմները՝ *Erasmus-Mundus* միջբուհական համատեղ ծրագրեր, “Եվրոպական դոկտորատ”, “մասնագիտական դոկտորատ”: Նպաստել Հայաստանի բուհերի միջև ասպիրանտների շարժունության զարգացմանը՝ հետազոտողի համատեղ պիլոտային ծրագրերի ստեղծման և կրեդիտների փոխանցման մեխանիզմների ներուժման միջոցով:

Նպատակ 2. Ապահովել ասպիրանտուրայի ընդունելության կայուն և պլանաշափ աճը Հայաստանի բարձրագույն կրթության, գիտության և իննովացիոն տնտեսության զարգացման կադրային կարիքներին համահունչ

Աժանցյալ խնդիրներ և ռազմավարության երաշխավորվող ուղղություններ

Խնդիր 2.1. Բարելավել բուհերի ընդունելության պետական պլանավորումը, ապահովելով վերին 2 աստիճանների առաջանցիկ զարգացումը:

- ա) Իրականացնել բարձրագույն կրթության համակարգի բոլոր 3 աստիճանների ընդունելության պլանավորման միասնական գործընթաց, ձևավորելով ընդհանուր մոտեցումներ և սկզբունքներ:
- բ) Սահմանել ասպիրանտուրայի և մագիստրատուրայի անվճար ուսուցման տեղերի հատկացման մասնագիտական գերակայություններ՝ ելնելով բարձրագույն կրթության և գիտության համակարգերի կադրային պահանջմունքներից և հանրապետության տնտեսական զարգացման առաջնային ուղղություններից:
- գ) Քանակական հարաբերակցությունները բարձրագույն կրթության տարբեր աստիճանների ընդունելության չափաքանակների միջև սահմանել ըստ մասնագիտությունների (ոչ ըստ բուհերի):
- դ) Աստիճանաբար մեծացնել վերին 2 աստիճանների հաշվեկշիռը ուսանողական ընդհանուր համակազմում, ձգտելով առնվազն կրկնապատկել ասպիրանտների թվաքանակը մինչև 2010-ը:

Խնդիր 2.2. Ապահովել ասպիրանտուրայի մուտքի մատչելիությունը, ուսուցման կազմակերպման և ֆինանսավորման բազմաձևությունը:

- ա) Ձևավորել հետազոտողի ծրագրի մասնագիտությունների համընդգրկուն անվանացանկ, համաձայնեցնելով այն նախորդող մագիստրոսի ծրագրի, ինչպես նաև <<գիտական մասնագիտությունների գործող ցանկերի հետ:
- բ) Երրորդ աստիճանի ծրագրեր կազմակերպելու իրավունքի, ինչպես նաև այս մակարդակում անվճար ուսուցման չափաքանակների (պետական կրթաթոշակ-ների, ուսումնական նպաստների) հատկացումը բուհերին իրականացնել երկրորդ

աստիճանի (մագիստրատուրայի) ծրագրերի որակի արտաքին գնահատման արդյունքների հիման վրա:

- գ) Պետական ֆինանսավորմանբ (անվճար հիմունքներով) ուսուցումը ասպիրանտուրայում կազմակերպել բացառապես նպատակային սկզբունքով՝ պատվիրատու պետական բուհերի և գիտական կազմակերպությունների հայտերով, ապահովելով ասպիրանտուրայի շրջանավարտների պատվիրատու կազմակերպություններում առնվազն 3 տարի աշխատելու գործող օրենսդրական պահանջի անխտիր կատարումը:
- դ) Նպաստավոր պայմաններ ստեղծել վճարովի հիմունքներով, հեռակա, դրսեկային ձևերով ասպիրանտուրայի ընդունելության ընդլայնման համար, առավելագույնս օգտագործելով ասպիրանտներին ժամանակավոր հետազոտական աշխատատեղեր տրամադրելու, կրթական վարկերի, դրամաշնորհների և կրթաթոշակների, ինչպես նաև ուսման վարձի գեղչերի հատկացման հնարավորությունները:

Նպատակ 3. Մեծացնել ասպիրանտուրայի դերը բարձրագույն կրթության և գիտության ու իննովացիաների համակարգերի փոխկապակցության և համագործակցության զարգացման մեջ, բարձրացնել շրջանավարտների ծառայունակությունն ու մրցունակությունը հետազոտական աշխատաշղուկայում

Աժանցյալ խնդիրներ և ռազմավարության երաշխավորվող ուղղություններ

Խնդիր 3.1. Զարգացնել բուհերի (գիտական կազմակերպությունների) համագործակցությունը արտադրական և գործարար ոլորտների ձեռնարկությունների հետ՝ ասպիրանտների ուսուցման և հետազոտությունների համատեղ պլանավորման և իրականացման ուղղությամբ:

- ա) Նպաստել ասպիրանտուրայի ծրագրային բազմազանեցմանը՝ ապագա հետազոտական կարիերայի առանձնահատկություններին համահունչ, ուսումնասիրել և ներդնել “բուհ-արտադրություն” համագործակցության վրա կառուցված մասնագիտական/արտադրական դոկտորատների եվրոպական առաջավոր փորձը: Ստեղծել անհրաժեշտ իրավական հիմք համապատասխան որակավորման ներմուծման և շնորհման համար:
- բ) Խթանել ատենախոսական հետազոտությունների կիրառական-իննովացիոն կողմնորոշումը, ատենախոսական թեմատիկայի շաղկապումը իննովացիոն նախագծերին, միաժամանակ պահպանելով ատենախոսությունների գիտական նորույթի հիմնարար պահանջը:

Խնդիր 3.2. Ասպիրանտների համար ստեղծել հետազոտությունների նպաստավոր պայմաններ և հետազոտական կարիերայի հնարավորություններ բուհի ներսում և դրան:

- ա) Սահմանել բուհերի պատասխանատվությունը ասպիրանտների հետազոտական կարիերայի ներքին և արտաքին հնարավորությունների և հեռանկարների ստեղծման, հետազոտական նախագծերում ասպիրանտների ընդգրկման համար:
- բ) Բուհում (գիտական կազմակերպություններում) ստեղծել ասպիրանտների հետազոտությունների նպաստավոր պայմաններ՝ Հետազոտողների եվրոպական

իսարտիայի⁷ և Հետազոտողների հավաքագրման ընթացակարգի կողերսի⁸ դրույթներին համապատասխան:

- գ) Մշակել նոր նորմատիվներ ասպիրանտուրայի ֆինանսավորման համար՝ ծրագրի հետազոտական և կրթական կառուցամասերի որակի ապահովման չափանիշներին և Զալցբուրգի սկզբունքներին⁹ համապատասխան:

⁷ The European Charter for Researchers / The Code of Conduct for the Recruitment of Researchers. European Commission. Directorate-General for Research. Human resources and mobility (Marie Curie Actions) EUR 21620. 2005, 36p.

⁸ Առյնը

⁹ Bologna Seminar on “Doctoral Programmes for the European Knowledge Society” (Salzburg, 3-5 February 2005). Conclusions and Recommendations. 3p.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. “Matching Ambition with Responsibilities and Resources”. Bologna Seminar on Doctoral Programmes (Nice, 7-9 December 2006). Final Conclusions - Preparing Recommendations for the London Communiqué. 5p.
2. European Presidency Conference “A researchers' labour market: Europe a pole of attraction? The European Charter for Researchers and the Code of Conduct for their Recruitment as a driving force for enhancing career prospects”, 1-2 June, 2006. Main outcomes of the conference, 6p.
3. The European Charter for Researchers / The Code of Conduct for the Recruitment of Researchers. European Commission. Directorate-General for Research. Human resources and mobility (Marie Curie Actions) EUR 21620. 2005, 36p.
4. Doctoral Programmes for the European Knowledge Society. Report on the EUA Doctoral Programmes Project, 2004-2005 // EUA Publications 2005. – 44p.
5. Bologna Seminar on “Doctoral Programmes for the European Knowledge Society” (Salzburg, 3-5 February 2005). Conclusions and Recommendations. 3p.
6. Glasgo Declaration, EUA Glasgo Convention, 31 March - 2 April, 2005.
7. Doctoral Studies and Qualifications in Europe and the United States: Status and Prospects // Edited by Jan Sadlak. UNESCO CEPES's series - Studies on Higher Education. Bucharest 2004, - 302p.
8. Reconstructing the Doctorate of former Soviet Union and Eastern Europe // Materials of the Seminar organized by the Central European University's Curriculum Resource Centre, 4-5 November, 2004 in Budapest. – 33p.
9. EUA Conference “Research Training as a Key to a Europe of Knowledge”. Maastricht, 28-30 October, 2004. Summary of conclusions and recommendations of the Plenary sessions and Discussion groups. 2p.
10. J. Huisman end J. Bartelse. Academic Career Perspectives of the PhD Candidate in Western European Countries // Center for Higher Education Policy Studies (CHEPS) of the Twente University. – 2001, 95p.
11. Conclusions of the EUA Report on Doctoral Programmes. EUA's Contribution to the Bologna Ministerial meting, London 2007. EUA Publications 2007. P. 17-18.

12. В. Сенашенко и др. Современная аспирантура и перспективы ее развития // Высшее образование в России. – 2005. - №3. ст. 68-73.
13. Сенашенко В.С. и др. Аспирантура как образовательная программа // Высшее образование в России. – 2001. - №3. – С.58-66.
14. Временные требования к основной образовательной программе послевузовского профессионального образования (Присуждаемая степень - Кандидат наук) // Министерство образования Российской Федерации. – Москва 2002.
15. Յու. Լ. Սարգսյան, “Մասնագիտական կրթության համակարգի վերակազմակերպումը՝ որպես տնտեսության իննովացիոն զարգացման հիմնական շարժիչ ուժ”: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բարեփոխումների հայեցակարգ (ծրագիր): UNDP ARM/02/008 նախագիծ, 31 էջ:
16. Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդայյան, “Բոլոնիայի գործընթացով դեպի Եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ)": Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: Վերլուծական գեկույց // Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն: Երևան, 2007թ., 216 էջ:
17. Ա. Ս. Բուդայյան: Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրը: Մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով սովորող ուսանողների և ասպիրանտների համար // Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան: Երևան, 2006թ., 198 էջ:

Մեթոդական ցուցումներ Հետազոտողի կրթական ծրագրի մշակման վերաբերյալ

1. Ծրագրի նպատակը

Գիտահենք գլոբալ տնտեսության կազմավորման պայմաններում բարձրագույն կրթության երրորդ աստիճանը (ասպիրանտուրան) կոչված է ծևավորել հետազոտողների նոր սերունդ, որն ունենալով խորացված մասնագիտական գիտելիքներ գիտության և տեխնոլոգիաների որոշակի բնագավառում, միևնույն ժամանակ օժտված կլինի ավելի լայն ընդհանուր (փոխանցելի) աշխատանքային ծիրթերով և կարողություններով, ինչպիսիք են՝ ողջ կյանքի ընթացքում սովորելու, տարաբնույթ պրոբլեմներ ծևակերպելու և լուծելու և քննադատական վերլուծության կարողությունները, գրագրական և հաղորդակցային ծիրթերը, թիմային աշխատանքի և միջազգային թիմերի կազմում աշխատելու, նախագծերի կառավարման ունակությունները և այլն:

Այս խնդիրներն իրականացնելու համար երրորդ աստիճանում անհրաժեշտ է ներմուծել ավելի ստրուկտուրացված և կազմակերպված կրթական ծրագիր, քան այսօր պահանջվող թեկնածուական մինիմումի երեք առարկաներն են: Այս պետք է ապահովի ասպիրանտի կարողությունների ավելի լայն շրջանակ՝ ապագա հետազոտական կարիերայի ավելի լայն տիրույթի ընդգրկմամբ: Նման ուսուցումը ավանդական գիտամանկավարժական (ակադեմիական) կարիերայից բացի ներառում է նաև այլ հետազոտական աշխատանքի հնարավորություններ՝ արդյունաբերությունում, գործարար կառույցներում, պետական և մասնավոր հետազոտական կազմակերպություններում և այլն:

Հետազոտողի կրթական ծրագրի նպատակն է ծևավորել մասնագիտացված հետազոտական և ընդհանուր փոխանցելի ծիրթերի անհրաժեշտ հենք՝ հետազոտական աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համահունչ:

2. Հետազոտողի ծրագրի կրթական բաղկացուցիչը

Ելնելով իր խնդիրներից, հետազոտողի ծրագրի կրթական բաղկացուցիչը պետք է ունենա 4 հիմնական բևեռակետեր.

- 1) Մասնագիտական գիտելիքների և կարողությունների ուսուցում գիտության և տեխնոլոգիաների մեկ կամ մեկից ավելի փոխկապակցված (միջդիսցիպլինար) ուղղություններով:
- 2) Ընդհանուր բազային հետազոտական կարողությունների ուսուցում (հետազոտական մեթոդներ և եղանակներ, հետազոտությունների կառավարում, վերլուծության, խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություններ, գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում, ակադեմիական գրագրություն անգլերենով, գիտական էթիկայի կանոնների և ինտելեկտուալ սեփականության իրավունքի իմացություն և այլն),
- 3) Կառավարման և հաղորդակցման կարողությունների ձևավորում (գրավոր և բանավոր հաղորդակցության կարողություններ, աշխատանք գիտական թիմերում և ցանցերում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում և դեկավարման հմտություններ, ժամանակի կառավարում, կարիերայի կառավարում՝ ներառյալ աշխատանքի որոնման հմտություններ և այլն),
- 4) Դասավանդման և մանկավարժական մեթոդների ուսուցում և համապատասխան ձիրքերի ձևավորում:

Ծրագիրը պետք է առաջադրի դասընթացների և կրթական այլ մոդուլների լայն ընտրություն՝ դասավանդման տարբեր ձևերի՝ դասախոսությունների, սեմինարների, կոլոքվիումների և քննարկումների գորգակցմամբ, ընդորում սեմինարներին և ինտերակտիվ դասընթացներին պետք է տրվի առաջնություն:

Ցանկալի է, որ մասնագիտական և հետազոտական կարողությունների ուսուցումը պարտադիր լինի, բայց տրամադրվի դասընթացների և կրթական մոդուլների լայն ցանկից ընտրության հնարավորություն:

Կառավարման և հաղորդակցման կարողությունների, ինչպես նաև մանկավարժական մեթոդների ուսուցումը նպատակահարմար է իրականացնել կամընտրական սկզբունքով, տալով ուսուցման բովանդակության ընտրության հնարավորություն՝ անհատական կարիքներին համապատասխան:

3. Ծրագրի ընդհանուր կառուցվածքը

Ծրագիրը բաղկացած է երկու փոխկապակցված կառուցամասերից՝ կրթական (պարտադիր և ընտրովի ընդհանուր և մասնագիտական դասընթացներ և կրթական մոդուլներ) և հետազոտական (ինքնուրույն հետազոտական աշխատանք, ատենախոսության կատարում): Առաջարկվում են հետազոտողի եռամյա կրթական ծրագրի պլանավորման հետևյալ ընդհանուր սկզբունքները.

- 1) Հետազոտողի եռամյա ծրագրի լրիվ բեռնվածությունը համարժեք է 120 կրեդիտային միավորի (կամ $120 \text{ կրեդիտ } \times 30 = 3600 \text{ ժամ}$ ներառյալ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը),
- 2) Ծրագրի 30-50%-ը կազմում է կրթական բաղկացուցիչը, որը համապատասխանում է 36-60 կրեդիտի կամ 1080-1800 ժամ լրիվ ուսումնական բեռնվածության, և ներառում է ընդհանուր և մասնագիտական ընտրովի և պարտադիր դասընթացներ և այլ կրթական մոդուլներ (ներառյալ թեկնածուական 3 քննությունները և ստուգարքը, մանկավարժական կամ հետազոտական պրակտիկան և այլն),
- 3) Ծրագրի մնացած 70-50% ծավալը՝ 84-60 կրեդիտ (1920-1800 ժամ), կազմում է հետազոտական բաղկացուցիչը՝ ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի, թեկնածուական ատենախոսության կատարման և ավարտական ատեստավորման տեսքով (վերջինիս համար հատկացվում է 5 կրեդիտ):

Հետազոտողի կրթական ծրագրի համար ստեղծվող դասընթացների և կրթական այլ մոդուլների ուսուցմանը զուգընթաց հարկավոր է լայնորեն օգտագործել նախորդող աստիճանի՝ մագիստրատուրայի կրթական ռեսուրսները՝ ներգրավելով հետազոտողի ծրագրի դասընթացների ընտրացանկում որոշ դասընթացներ մագիստրոսի ծրագրից:

4. Հետազոտողի ծրագրի պլանավորման ընդհանրացված սխեմա

Ստորև ներկայացվում է հետազոտողի կրթական ծրագրի ուսումնական պլանի կառուցման ընդհանրացված սխեմա, որը մշակվել և հաջողությամբ փորձարկվել է ՀՊՃՀ-ում:

ՈՒՍԽՆՎԿԱՆ կան ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐ		Կրեդիտներ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹԱԾԱՍ (8 կրեդիտ)		
Օսար լեզու (անգլերեն)	4	
Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	2	
Մանկավարժություն և հոգեբանություն	2	
Գիտական էթիկա	2	
Ակադեմիական գրագրություն անգլերենով	4	
Գործարար գրագրություն և հաղորդակցման կարողություններ	4	
Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում	2	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԾԱՍ (18 կրեդիտ)		
Ուսուցման նոր տեխնոլոգիաներ	2	
Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	4	
Նախագծերի մշակում և կառավարում	4	
Հետազոտությունների կառավարում	2	
Վերլուծության մեթոդներ և պրոբլեմների լուծում	2	
Ժամանակի կառավարում	2	
Կարիերայի կառավարում և աշխատանքի որոնման մեթոդներ	2	
Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, և դեկավարում	2	
Ինտելեկտուալ սեփականության իրավունք	2	
Պատենտագիտություն	2	
Ընտրովի դասընթաց ինֆորմացիոն տեխնոլոգիաների դասընթացների ցանկից	4	
Ընտրովի դասընթաց հասուկ մաթեմատիկական դասընթացների ցանկից	4	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԾԱՍ (20 կրեդիտ)		
Մասնագիտական պարտադիր դասընթաց-1	4	
Մասնագիտական պարտադիր դասընթաց-2	4	
Մասնագիտական պարտադիր դասընթաց-3	4	
Մասնագիտական ընտրովի դասընթաց-1	4	
Մասնագիտական ընտրովի դասընթաց-2	4	
Մասնագիտական ընտրովի դասընթաց-3	4	
Մասնագիտական ընտրովի դասընթաց-4	4	
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ (4 կրեդիտ)		
Մանկավարժական պրակտիկա	4	
Հետազոտական պրակտիկա	4	
Թիմային աշխատանքի պրակտիկում	4	
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱԾԽԱԾԱՆՔ (55 կրեդիտ)		
Գիտական սեմինարներ և աշխատաժողովներ	10	
Գիտահետազոտական աշխատանք և ատենախոսության կատարում	45	
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ (15 կրեդիտ)		
Որակավորման քննություն փիլիսոփայությունից	2	
Որակավորման քննություն օսար լեզվից	2	
Որակավորման ստուգարք ինֆորմատիկայից	2	
Որակավորման քննություն մասնագիտությունից	4	
Եզրափակիչ ատեստավորում	5	
ԸՆԴԱԾԵՆԸ՝ 120 կրեդիտ		